

# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

Հայաստանի Հանրապետության կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջև մաքսային բնագավառում համագործակցության եւ փոխօգնության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարությունը, այսուհետև «Պայմանագիր Կողմեր»,

Ելնելով երկու պետությունների միջև առևտրային և տնտեսական հարաբերությունների զարգացման անհրաժեշտությունից,

Ձգտելով երկու պետությունների միջև բեռնաշրջանառության իրականացմամբ կայուն համագործակցություն և փոխօգնություն հաստատել մաքսային հսկողության և մաքսային խախտումների դեմ պայքարի ոլորտում,

## համաձայնեցին հետևյալի մասին

### ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի նպատակների համար կիրառվող տերմինները նշանակում են՝

- «Մաքսային օրենսդրություն» - երկու Պայմանագիր Կողմերի մաքսային ծառայությունների կողմից կիրառվող օրենսդրական և իրավական դրույթներ, որոնք կարգավորում են ապրանքների արտահանումը, ներմուծումը և տարանցումը, ինչպես նաև դրանց տեղափոխումը ցանկացած մաքսային ընթացակարգի ներքո՝ ներառյալ արգելման, սահմանափակման և հսկողության միջոցները.

- «Մաքսային ծառայություն» - Հայաստանի Հանրապետությունում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեն, Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում՝ Եգիպտոսի մաքսային ծառայությունը.

- «Մաքսային իրավախախտումներ» - մաքսային օրենսդրության խախտումներ կամ խախտում կատարելու որևէ փորձ.

- «Անձ» - յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ.

- «Թմրանյութեր» - ՄԱԿ-ի 1961թ. «Թմրանյութերի մասին» միասնական կոնվենցիայով հաստատված անվանացանկում ընդգրկված նյութերը՝ հետագա լրացումներով.

- «Հոգեներգործուն նյութեր» - ՄԱԿ-ի 1971թ. «Հոգեներգործուն նյութերի մասին» կոնվենցիայով հաստատված անվանացանկում ընդգրկված նյութերը՝ հետագա լրացումներով.

- «Մաքսային տուրքեր և հարկեր» - մաքսատուրքերը և բոլոր այլ տուրքերը, հարկերը, վճարները կամ մուծումները, որոնք գանձվում են ապրանքների ներմուծման և արտահանման ժամանակ կամ այդ կապակցությամբ, բացառությամբ այն վճարների և մուծումների, որոնք գանձվում են տրամադրված ծառայությունների դիմաց.

- «Վերահսկելի մատակարարում» - Պայմանագիր Կողմերի մաքսային տարածքներում կիրառվող ընթացակարգ, որն իրականացվում է դրանց իրավասու մարմինների հսկողության ներքո՝ ապօրինի բեռների կամ այն բեռների ներմուծման և արտահանման ժամանակ, որոնց նկատմամբ կասկած կա, որ պարունակում են թմրանյութեր, հոգեներգործուն նյութեր կամ դրանց փոխարինող նյութեր, ինչպես նաև ապրանքների ցանկացած այլ ապօրինի փոխադրումների դեպքում՝ այդպիսի իրավախախտումների կատարման մեջ ներգրավված անձանց բացահայտելու նպատակով.

- «Տարանցում» - Պայմանագիր Կողմերից մեկի կողմից մյուս Պայմանագիր Կողմի տարածքով ապրանքների տեղափոխումը դեպի երրորդ երկիր:

## **ՀՈՂՎԱԾ 2**

Սույն Համաձայնագրի նպատակների իրականացման համար Պայմանագիր Կողմերը կձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները բեռների, ուղևորների փոխադրումների և փոստային առաքումների մաքսային հսկողության պարզեցման, այդ հսկողության մեթոդների կատարելագործման, ինչպես նաև բեռների և տրանսպորտային միջոցների ապօրինի ներմուծման, արտահանման, տարանցման, ուղևորների, փոստային առաքումների, արժուքային արժեքների ապօրինի տեղափոխման կանխարգելման նպատակով, որոնք կարող են վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության տնտեսական և այլ շահերին՝ երկու երկրների ազգային օրենսդրությունների դրույթներին համապատասխան, չխախտելով Պայմանագիր Կողմերի՝ այլ միջազգային պայմանագրերի շրջանակներում, որոնց դրանք անդամակցում են, ստանձնած պարտավորությունները:

## **ՀՈՂՎԱԾ 3**

Պայմանագիր Կողմերի մաքսային տարածքներով փոխադրվող տարանցիկ բեռների տեղափոխումն իրականացվում է իրենց երկրների համապատասխան օրենսդրությունների համաձայն, չխախտելով երկու երկրներում կիրառվող օրենքները և կանոնները:

## **ՀՈՂՎԱԾ 4**

Կողմերի մաքսային մարմինները փոխադարձաբար ճանաչում են միմյանց մաքսային փաստաթղթերը, մաքսային ապահովումները (կապարակնիքներ, կնիքներ) և փոստային առաքումների, բեռների և տրանսպորտային միջոցների վրա դրված պաշտոնական նշանները:

Կողմերը փոխանակվում են սույն հոդվածում նշված մաքսային փաստաթղթերի և ապահովումների նմուշներով:

## **ՀՈՂՎԱԾ 5**

Պայմանագիր Կողմերից մեկ հայցի հիման վրա, Պայմանագիր Կողմերից մեկի տարածք ներմուծված և դրա հսկողություն իրականացնող մարմիններից որևէ մեկի կողմից մերժված ապրանքները, տրանսպորտային միջոցները, արժուքային արժեքները և այլ առարկաները կվերաարտահանվեն մյուս Պայմանագիր Կողմի տարածք՝ համապատասխան փաստաթղթերում նշելով մերժման պատճառները:

## **ՀՈՂՎԱԾ 6**

Մի կողմի տարածքից մյուս կողմի տարածք ապօրինի ներմուծված բոլոր ապրանքների նկատմամբ կկիրառվեն այն տարածքի ազգային մաքսային օրենսդրության նորմերը, որի տարածքում այդ ապրանքները գտնվում են:

## **ՀՈՂՎԱԾ 7**

Երկու Պայմանագիր Կողմերն իրենց օրենսդրությունների և փոխադրման միջազգային կանոնների շրջանակներում երաշխավորում են տարանցիկ փոխադրումների ապահովությունը:

իրենց տարածքներում գտնվելու ամբողջ ժամանակաշրջանում: Փոխադրողը պատասխանատվություն է կրում տեղափոխման ընթացքում տարանցիկ բեռներից հասցված վնասների, պակասուրդի և ցանկացած այլ խախտումների համար:

## **ՀՈԴՎԱԾ 8**

Պայմանագիր կողմերը, իրենց պետություններում գործող օրենսդրությանն ու կանոններին համապատասխան, սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցում են մաքսանենգության և մաքսային կանոնների խախտումների, ինչպես նաև թմրամիջոցների և հոգեմեդիկամենտների նյութերի ապօրինի շրջանառությունը կանխարգելելու և հետաքննելու նպատակով:

Կողմերի ներկայացրած ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր տեղեկությունները համարվում են գաղտնի:

## **ՀՈԴՎԱԾ 9**

1. Սույն Համաձայնագրի շրջանակներում ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը կարող է օգտագործվել ստացող Պայմանագիր կողմի կողմից բացառապես սույն Համաձայնագրում նշված նպատակների համար և միայն իրավասու մարմինների կողմից, ներառյալ դրանց օգտագործումը դատական և վարչական գործընթացներում: Այդ փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը կարող են օգտագործվել ստացող Պայմանագիր կողմի կողմից այլ նպատակներով՝ միայն դրանք տրամադրող Պայմանագիր կողմի համաձայնությամբ:

2. Սույն Համաձայնագրի շրջանակներում Պայմանագիր կողմին տրամադրված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը, տրամադրող Պայմանագիր կողմի հայցի հիման վրա, ստացող Պայմանագիր կողմի կողմից կհամարվեն գաղտնի:

3. Սույն Համաձայնագրի շրջանակներում ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը կօգտվեն գաղտնիության այն աստիճանից, որը կիրառվում է այդ երկրում:

4. Սույն Համաձայնագրի շրջանակներում անձնական տվյալների փոխանակման դեպքում, Պայմանագիր կողմերը կապահովեն այն պաշտպանվածության մակարդակը, որը կիրառվում է դրանք տրամադրող Պայմանագիր կողմի տարածքում՝ իր պետության տարածքում գործող ազգային օրենսդրությանը համապատասխան:

## **ՀՈԴՎԱԾ 10**

1. Պայմանագիր կողմերից մեկի մաքսային ծառայությունը կարող է լիազորել իր պաշտոնատար անձանց՝ մյուս Պայմանագիր կողմի մաքսային ծառայության հայցի հիման վրա, հանդես գալու մյուս Պայմանագիր կողմի տարածքում որպես փորձագետներ կամ վկաներ դատական կամ վարչական մարմիններում՝ սույն Համաձայնագրի շրջանակներում գտնվող հարցերի առնչությամբ, ներկայացնել փաստեր, փաստաթղթեր կամ դրանց վավերացված օրինակներ, որոնք կարող են պահանջվել գործընթացների ժամանակ:

Ներկայանալու մասին հայցում պետք է հստակ նշվի, թե որ դատական կամ վարչական մարմիններում, որ դեպքի համար և ինչ լիազորություններով պաշտոնատար անձը պետք է ներկայանա, ինչպես նաև ինչ պաշտոն կամ որակավորում նա պետք է ունենա:

2. Հայցող ծառայությունը պետք է ձեռք առնի բոլոր անհրաժեշտ միջոցները իր տարածքում գտնվելու ընթացքում պաշտոնատար անձանց սեփական անվտանգության ամբողջական պաշտպանության և ցուցմունքների գաղտնիության համար՝ սույն հոդվածի 1-ին կետի կապակցությամբ: Այդ պաշտոնատար անձանց տրանսպորտային ծախսերը, գիշերավարձը և օրապահիկը կհատուցվեն հայցող ծառայության կողմից:

3. Մաքսային ծառայությունների պաշտոնատար անձանց որպես փորձագետներ կամ վկաներ ներկայանալու մասին հայցը պետք է իրականացվի Պայմանագիր կողմերի ազգային օրենսդրությունների համաձայն:

## **ՀՈՂՎԱԾ 11**

Կողմերը, իրենց սեփական նախաձեռնությամբ կամ մյուս կողմի հարցման հիման վրա, միմյանց ներկայացնում են տեղեկություններ՝

ա) թմրանյութերի մաքսանենգությամբ կամ ապօրինի շրջանառությամբ զբաղվող հայտնի կամ կասկածվող անձանց մասին.

բ) մաքսանենգ ճանապարհով ապրանքների շրջանառության համար օգտագործվող տրանսպորտային միջոցների, բեռների և փոստային առաքումների մասին.

գ) Կողմերից մեկի տարածքով մյուսի տարածք թմրանյութերի ապօրինի շրջանառության և մաքսանենգության հայտնաբերման փաստերի մասին.

դ) մաքսանենգության մեթոդների և դրանց հայտնաբերման ուղիների մասին:

## **ՀՈՂՎԱԾ 12**

Սույն Համաձայնագրի համաձայն աշակցության մասին հարցումները ներկայացվում են գրավոր, հարցմանը պետք է կցվեն դրա իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Օգնության մասին հարցումը պետք է ընդգրկի հետևյալ տեղեկատվությունը՝

- հարցում ներկայացնող մաքսային ծառայության անվանումը.
- հարցման նպատակն ու պատճառը.
- այն անձանց անուններն ու հասցեները, հայտնի լինելու դեպքում, որոնք հայտնի են որպես հետաքննության օբյեկտ.
- քննարկվող դեպքի համառոտ նկարագիրն ու ընդգրկած համապատասխան իրավական տարրերը:

Սույն Համաձայնագրի համաձայն փոխանակվող տեղեկատվությունը պետք է իրականացվի կողմերի պաշտոնական լեզուներով՝ կցելով դրանց անգլերեն լեզվով թարգմանությունը:

## **ՀՈՂՎԱԾ 13**

Կողմերը, իրենց օրենսդրությանը համապատասխան, անհրաժեշտության դեպքում, թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ արդյունավետ պայքարի նպատակով կիրառում են թմրանյութերի և հոգեմերգործուն նյութերի «վերահսկելի մատակարարման» մեթոդը:

## **ՀՈՂՎԱԾ 14**

Պայմանադիր Կողմերը, իրենց օրենսդրությանը համապատասխան և սույն համաձայնագրի շրջանակներում, համագործակցում են մշակութային արժեքների ապօրինի ներմուծման/արտահանման դեմ պայքարի ոլորտում: Պայմանադիր Կողմերի մաքսային մարմինները վերադարձնում են հնության և արվեստի առարկաներով, ինչպես նաև այլ մշակութային արժեքները, որոնք ապօրինի կերպով են տեղափոխվել Պայմանադիր Կողմերից մեկի տարածքից մյուսի տարածք:

## **ՀՈՂՎԱԾ 15**

1. Այն դեպքերում, երբ հարցվող Պայմանադիր Կողմը գտնում է, որ հարցման պատասխանը կարող է վնաս հասցնել իր ինքնիշխանությանը, անվտանգությանը, պետական կարգին կամ ազգային շահերի այլ կարևոր ոլորտներին, այն կարող է մերժել օգնության տրամադրումը կամ տրամադրել այն որոշակի պայմաններով:

2. Օգնության մերժման դեպքում, մերժման պատճառը պետք է անհապաղ գրավոր ձևով տրամադրվի հայցող ծառայությանը:

### **ՀՈԴՎԱԾ 16**

Պայմանագիր կողմերը չեն պահանջի սույն Համաձայնագրի իրականացման ընթացքում առաջացած ծախսերի հատուցում: Փորձագետների, վկաների և թարգմանիչների ծախսերը և վճարները, որոնք չեն հանդիսանում պետական ծառայողներ, կծածկվեն հայցող կողմի կողմից:

### **ՀՈԴՎԱԾ 17**

Սույն Համաձայնագրի կիրառման և մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը կլուծվեն կողմերի մաքսային ծառայությունների միջև բանակցությունների միջոցով:

Սույն Համաձայնագիրը կարող է լրացվել և փոփոխվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

### **ՀՈԴՎԱԾ 18**

Կողմերը միմյանց տրամադրում են տեղեկատվություն մաքսային հարցերին առնչվող իրենց երկրներում գործող օրենսդրությունների վերաբերյալ:

### **ՀՈԴՎԱԾ 19**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվանից, երբ կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց կտեղեկացնեն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին և կգործի անորոշ ժամանակով, եթե կողմերից որևէ մեկը մյուս կողմին ոչ պակաս, քան վեց ամիս առաջ, գրավոր չի տեղեկացնում Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր ցանկության մասին:

Կատարված է 200 ... թ. «.....» -ի «.....» -ին ք. ....-ում, երկու բնօրինակով՝ հայերեն, արաբերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում հիմք է ընդունվում անգլերեն լեզվով տեքստը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ**

**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԿՈՂՄԻՑ**

**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**

**Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2008թ.մարտի 27-ից:**